

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏ,

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

_____ Մ. Ա. ԲԱԲԱՅԱՆ

«_____» _____ 2018թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) քոլեջի պետին առընթեր խորհրդակցական մարմին է, որի աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է քոլեջի պետը:

2. Խորհրդի ձևավորման կազմը և կանոնակարգը սահմանվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ կրթահամալիր) պետի հրամանով՝ քոլեջի պետի ներկայացմամբ:

3. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

4. Քոլեջի խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, ՀՀ ոստիկանության պետի հրամաններով, ՀՀ ոստիկանության կրթահամալիրում գործող ներքին և իրավական այլ ակտերով:

II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Խորհուրդը բաղկացած է 15 անդամից:

6. Խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը կազմում են քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի սովորողները, որոնց թեկնածությունը քոլեջի սովորողների կազմից առաջադրում է կրթահամալիրի ուսանողական խորհուրդը:

7. Դասակներն իրենց ներկայացուցիչների թեկնածությունը ներկայացնում են կրթահամալիրի ուսխորհրդին: Վերջինս՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսի համապատասխան՝ սովորողների թեկնածությունները ներկայացնում է խորհրդի

քարտուղարին, իսկ սովորողների թեկնածությունները պետք է ներկայացվեն բոլոր դասակներից հավասար համամասնությամբ:

8. Խորհուրդը՝

ա) քննարկում և առաջարկություններ է ներկայացնում կրթահամալիրի գիտական խորհրդին՝ միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկանության սպա» որակավորման պետական կրթական չափորոշիչի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

բ) քննարկում և առաջարկություններ է ներկայացնում կրթահամալիրի խորհրդին՝ կրթահամալիրի քոլեջի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի վերաբերյալ,

գ) քննարկում է քոլեջի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հարցեր,

դ) քննարկում և կրթահամալիրի պետի հաստատման է ներկայացնում քոլեջի սովորողների պրակտիկայի ծրագրերը,

ե) քննարկում է քոլեջի խորհրդի կազմի, կանոնակարգի փոփոխման հարցերը և համապատասխան առաջարկությամբ դիմում քոլեջի խորհրդի նախագահին,

զ) քննարկում է քոլեջի ռազմավարական ծրագիրը,

է) քննարկում է քոլեջի դասախոսների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները, քոլեջի պետի առաջարկությամբ,

ը) քննարկում է քոլեջի ուսումնական պլանները և առարկայական նկարագրերի նախագծերը,

թ) քննարկում է քոլեջի սովորողների ուսումնական ընթացիկ առաջադիմությունը, քննաշրջանի արդյունքները, ամփոփում է ուսումնական և նախաավարտական պրակտիկաների արդյունքները,

ժ) քննարկում է քոլեջի տարեկան հաշվետվությունը,

ի) քննարկում է ՀՀ ոստիկանության պետի անվանական կրթաթոշակի հավակնորդ սովորողների թեկնածությունները, որի վերաբերյալ հիմնավոր եզրակացություն է ներկայացնում կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչություն ,

լ) քննարկում է քոլեջի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերում լրացումներ և փոփոխություններ կատարելու հարցը:

9. Խորհրդի նիստերը բաց են: Խորհրդի նիստերն անցկացվում են սույն կանոնակարգին համապատասխան: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության,

խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել կրթահամալիրի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ:

10. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել կրթահամալիրի պետի հրամանով, եթե խորհուրդն առանց հարգելի պատճառի ուսումնական տարվա ընթացքում երեք անգամ անընդմեջ նիստեր չի գումարում կամ որոշում չի ընդունում իր լիազորությանը վերապահված հարցերի վերաբերյալ: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

III. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

11. Խորհրդի նախագահը քուլեջի պետն է: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը նախագահում է քուլեջի պետի կողմից լիազորված որևէ անդամ:

12. Խորհրդի նախագահը՝ որոշում է խորհրդի նիստի անցկացման վայրը և օրը, հրավիրում է խորհրդի արտահերթ նիստ, հաստատում է խորհրդի նիստի օրակարգը, ստորագրում է խորհրդի նիստի արձանագրությունը, խորհրդի առաջարկության հիման վրա խորհրդի կազմի փոփոխման միջնորդությամբ դիմում է կրթահամալիրի պետին:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

13. Խորհրդի քարտուղարն օժտված է խորհրդի անդամի իրավունքներով և կրում է վերջինիս վրա սույն կանոնակարգով դրված պարտականությունները:

14. Խորհրդի նիստին մասնակցելու անհնարինության դեպքում խորհրդի քարտուղարը պարտավոր է նախապես տեղեկացնել խորհրդի նիստը նախագահողին՝ հայտնելով չներկայանալու պատճառը:

15. Ի լրումն սույն կանոնակարգի 13 և 14 կետերում նշված իրավունքների ու պարտականությունների խորհրդի քարտուղարը՝ կազմում, ստորագրում և խորհրդի նախագահի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը, խորհրդի հերթական նիստից առնվազն երկու, իսկ արտահերթ նիստից առնվազն մեկ օր առաջ նիստի վայրի, օրվա և օրակարգի մասին տեղեկացնում է խորհրդի անդամներին, խորհրդի նիստի արդյունքում տրված հանձնարարականները առանձին քաղվածքի տեսքով 10

աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է ըստ վերաբերության, կազմում, ստորագրում և պահպանում է խորհրդի նիստերի արձանագրությունները:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

16. Խորհրդի անդամն իրավունք ունի՝ քոլեջի խորհրդի քարտուղարից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ՝ խորհրդի իրավասության սահմաններում քննարկվող հարցերի վերաբերյալ, նախապատրաստել հարցերի քննարկում և առաջարկություններ ներկայացնել քննարկվող հարցերի վերաբերյալ, խորհրդի նիստի ժամանակ հարցեր տալ զեկուցողին և հանդես գալ ելույթով:

VI. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

17. Խորհրդի անդամը պարտավոր է՝ մասնակցել խորհրդի հերթական և արտահերթ նիստերին, նիստին մասնակցելու անհնարինության դեպքում նախապես տեղեկացնել խորհրդի քարտուղարին՝ հայտնելով չներկայանալու պատճառը, կատարել խորհրդի որոշումներն ու խորհրդի նախագահի հանձնարարությունները, խորհրդի նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել իր վերջնական դիրքորոշումը՝ քվեարկության միջոցով:

Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

- 1) խորհրդի լիազորություններն ավարտվելու դեպքում,
- 2) եթե առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին,
- 3) եթե տեղափոխվել է այլ ստորաբաժանում,
- 4) եթե ազատվել է ոստիկանությունում ծառայությունից:

Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել կրթահամալիրի պետի հրամանով՝ սույն կանոնակարգի որևէ կետ չկատարելու դեպքում:

VII. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

18. Խորհրդի գործունեությունն իրականացվում է խորհրդի հերթական կամ արտահերթ նիստերի միջոցով:

19. Խորհրդի հերթական նիստերը գումարվում են երկու ամիսը մեկ անգամ, ինչպես նաև յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի նախօրեին, իսկ այլ հարցերով նիստեր հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

20. Հրատապ հարցերի քննարկման համար արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի նախագահի կողմից կամ խորհրդի անդամների թվի մեկ երրորդի նախաձեռնությամբ:

21. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան ներկա են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

22. Խորհրդի նիստին մասնակցելու համար կարող են հրավիրվել կրթահամալիրի այլ աշխատակիցներ, եթե նրանք առնչություն ունեն քննարկվող հարցի հետ՝ առանց ձայնի իրավունքի:

23. Խորհրդի նիստը կարող է հետաձգվել քվեարկության միջոցով՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

24. Օրակարգային հարցի քննարկումը սկսվում է խորհրդի քարտուղարի կամ անհրաժեշտության դեպքում՝ հարցը նախապատրաստող անձի զեկուցումով:

25. Եթե մտքերի փոխանակությունը, ելույթը կամ նիստին մասնակցողի այլ հայտարարությունը առնչություն չունի քննարկվող հարցի հետ, կամ եթե նիստի նախագահողը գտնում է, որ խորհուրդը ստացել է բավարար տեղեկություն քննարկվող հարցի վերաբերյալ, նա կարող է խնդրել ելույթ ունեցողին ավարտել այն:

26. Քննարկվող հարցերի վերաբերյալ խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի անդամը քննարկվող հարցի վերաբերյալ իր վերջնական դիրքորոշումն արտահայտում է «կողմ» կամ «դեմ» ձևերով:

27. Քվեարկության ավարտից հետո նախագահողը բարձրաձայն հայտարարում է քվեարկության արդյունքները՝ շեշտելով առաջարկության կամ օրակարգային այլ հարցի ընդունված կամ մերժված լինելու հանգամանքը:

28. Խորհրդի նիստն արձանագրվում է: Արձանագրությունները ստորագրվում են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

29. Եթե հարցի քննարկման արդյունքում պարզվում է, որ այն բավարար չափով չի նախապատրաստվել, ապա խորհուրդը քվեարկության միջոցով՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, տվյալ հարցի քննարկումը հետաձգում է մինչև դրա բավարար նախապատրաստումը:

30. Խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից ստորագրվելուց հետո:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջ